Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
մարտի 17-ի նիստի N 10
արձանագրային որոշման

Հայաստանի Հանրապետության հետ գերմանական ֆինանսական համագործակցություն «Համայնքային ենթակառուցվածքներ ծրագիր II, Փուլ-2րդ»-ի (BMZ-No:2009.66.515) շրջանակներում Մասհանման ժամկետի երկարաձգում մինչև 2017թ. դեկտեմբերի 30-ը:

2010թ. մայիսի 4-ին կնքված 30 մլն եվրո արժողությամբ վարկային համաձայնագրի (վարկային հաշիվ թիվ 24560-02), նշյալ համաձայնագրի Առանձին համաձայնագրի և 2010թ. օգոստոսի 3-ին կնքված մասհանումների ժամկետի՝ մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը երկարաձգման մասին Նամակի վերաբերյալ

Հարգելի պարոն Խաչատրյան,

Ելնելով վերոգրյալ Վարկային համաձայնագրից և հիմք ընդունելով ծրագրի իրականացման ուշացումները՝ սույնով մենք հաստատում ենք, որ Վարկային համաձայնագրի 3.2 հոդվածով սահմանված մասհանումների ժամկետը կերկարաձգվի մինչև 2017թ. դեկտեմբերի 30-ը: Մասհանման ժամկետի երկարաձգումը չի անդրադառնա Վարկային համաձայնագրի որևէ այլ դրույթներին:

Մաս Ա: Վարկային համաձայնագրի փոփոխություններ

Վարկային համաձայնագիրը պետք է փոփոխվի հետևյալ կերպ՝

Հոդված 3.2-ը՝ մասհանումների համար վերջնաժամկետը, պետք է փոփոխվի հետևյալ կերպ՝

«KfW-ն իրավունք ունի մերժել ցանկացած մասհանման պահանջ 2017թ. դեկտեմբերի 30-ից հետո»:

Մաս Բ: Լրացուցիչ դրույթներ:

1. Սույն նամակը չի փոփոխում կամ ժխտում Վարկային համաձայնագրի որևէ դրույթի , եթե այլ բան հստակ սահմանված չէ սույն նամակով:
2. Վարկային համաձայնագրի Հոդված 10.2-ի (Ծախսեր), Հոդված 13.2-ի (Հասցեներ), Հոդված 14.3-ի (Մասնակի անվավերության բացեր) և Հոդված 14.4 (Գրավոր նմուշ) դրույթները ներառված են սույն նամակում այնքանով, որքանով դրանք ամբողջական սահմանված են սույն նամակում և որքանով Վարկային համաձայնագրի տվյալ դրույթների հղումները սույն նամակի հղումներն են:
3. Սուն նամակը կառավարվում է գերմանական օրենքով:
4. Սույն նամակի հետ կապված բոլոր վեճերը պետք է կարգավորվեն բացառապես և վերջնական մեկ կամ 3 արբիտրներից բաղկացած արբիտրաժային տրիբունալի կողմից՝ նշանակված և համաձայն Փարիզի Միջազգային առևտրային պալատի հաշտեցման և արբիտրաժի կանոնների: Արբիտրաժային տրիբունալը պետք է գործի այնպես, որպեսզի ապահովի ցանկացած դատավճռի կայացման կիրառելիություն: Արբիտրաժի վայրը պետք է լինի Ֆրանկֆուրտը, իսկ լեզուն՝ անգլերեն:

Հարգանքով՝
KfW

_____ _____

պարոն Մարիոն Նիշչ տիկին Դանիելա Բես
(Բաժնի պետ) (Ծրագրի ղեկավար)

Համաձայնեցված է:

DRAFT

Մարտի ____, Երևան, 2016թ.

_____

Հայաստանի Հանրապետություն՝
ի դեմս ֆինանսների նախարարության

պարոն Գագիկ Խաչատրյան
(ՀՀ ֆինանսների նախարար)

Մարտի ____, Երևան, 2016թ.

_____

Հայաստանի Հանրապետություն՝
ի դեմս ՀՀ ԳՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի

պարոն _____
(_____)

Մարտի ____, Երևան, 2016թ.

_____

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
պարոն _____
(_____)

DRAFT